

6766

Զ. ԼԱԶՅԱՆ

94

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ XV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՅԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

31K02

L-13

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԻՐՈՍԿՎԱ

1929

3K02

5-13

15 SEP 2005

Z. LU23UN

1 DEC 2009

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ XV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՅԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

880

13116 553



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՄԱՍԿՎԱ, 1929

30 APR 2013

6766

Ռուսերենից քարգմ. Ա. Տեր-Մարտիրոսյան

377

45



3698-91

«Մեզ հարկավոր է առույգ, կյանքի թանձրույթով
ընթացող, կյանքը գիտեցող, քաջարի շինարար, դեպի
նեխվածությունը, բորբոսանքը գերեզմանափորու-
թյունը, կարակային արցունքները, դատարկապորտու-
թյունը, ամբարտաժանությունն ու ասլությունը նող-
կանքով վերաբերվող մարդկանց գրականություն:
Բուրժուազիայի մեծագույն մարդիկն են յեղեղ վոչ թե
հանճարեղ հարբեցողի (Վերլենի) նման մարդիկ, այլ
այնպիսի հսկաներ, ինչպես են՝ Գեոթեն, Հեգելը, Բեթ-
հովենը, վորոնք այնպես գիտելին աշխատել, ինչպես
վոչ վոք: Պրոլետարիատի մեծագույն հանճարները—
Մարքսը, Ենգելսը, Լենինը — յեղեղ են մեծագույն
քրտնաշան աշխատողներ ահագին աշխատավորական
կուլտուրայով: «Հողմով աղբառ» յերանելիները, ի սեր
Քրիստոսի ապուշները, կաֆեշանտանային կես ժամով
«հանճարները» — հեռու դրանցից: Մոտեցնեք այն յերե-
վելի կյանքին, վոր ծաղկում է յերկրի վրա, մոտեցնեք
աշխարհը վերաշինող մասսաներին»:

«Չար Եկատրովյուններ»

Կուսակցության XV համագումարի վորոշում-
ները մեծ հետաքրքրություն են ներկայացնում
այն զբող զբող-գեղարվեստագետի համար, վորն
իր ստեղծագործության վիճակը կապել է կառուց-
վող սոցիալիզմի յերկրի և միջազգային պրոլետա-
րական հեղափոխության վիճակի հետ: Համագու-
մարի նյութերը շատ արժեքավոր աննունդ են
տալիս ամեն մի այդպիսի գրողի ստեղծագործական
աշխատանքի համար: Մխալ կլինի, յեթե համագու-

մարի վորոշումներն ընդունվեն իբրև սոսկ քաղաքական գործնեյության դիրեկտիվներ: Համագումարի աշխատանքները հսկայական կարևորություն ունեցող մի աղբյուր են, վորից կարող եւ պետք եւ շատ բան քաղի իր ստեղծագործական աշխատանքի համար այժմեական խորհրդային գեղարվեստա կան գրականության յուրաքանչյուր գործիչ:

Համագումարի վորոշումները խոստում են այն մասին, վոր մեր յերկիրը լայն ծրագրով արդեն ձեռք եւ զարկել սոցիալիստական շինարարության: Համագումարը տընտեսության շրջանում նիշել եւ սոցիալիզմի հիմունքներով ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանի դիրեկտիվները: Համագումարը առաջադրել եւ, իբրև մի կոնկրետ խընդիր, գյուղի սոցիալիստական վերաշինությունը՝ գյուղացիական բաժան-բաժան տնտեսության միավորման եւ կոլեկտիվ գյուղատնտեսություն ստեղծելու հիմունքներով:

Այս յերկու կարևորագույն խնդիրները, վորոնց իրագործումը արմատապես կկերպարանափոխի մեր յերկրի վողջ եկոնոմիկան, սերտ կախումն ունեն որվա յերրորդ կարևորագույն խնդրից— կուլտուրական հեղափոխության (իբրև սոցիալիզմի հաղթական առաջխաղա-

ցության անհրաժեշտ պայմանի) իրագործումից:

Համագումարի վորոշումներում մեր յերկրի կուլտուրական շինարարությունն ընդունվում եւ իբրև սոցիալիստական շինարարության անքակտելի մաս: Դրանով ընդգծվում եւ ներկա շրջանի կուլտուրական աշխատանքի բոլոր տեսակների ու ձևերի խորին կարևորությունը:

Այս կերպ, համագումարի վորոշումները նիշում են մեզանում սոցիալիստական շինարարության հետագա ուղիները յերկար տարիների համար: Համագումարի վորոշումներն ընդունված են ԽՍՀ Միության զարգացման այնպիսի մի շրջանում, յերբ ավելի ու ավելի համառ եւ առաջադրվում աշխատավոր մասսաների գրեթե գլխովին մասնակցության խնդիրը սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում: Դրա համար եւ համագումարը այնպիսի վճռականությամբ ընդգծեց մեր կուլտուրական յետաձգցությունը (վոր ներկայումս սոցիալիստական շինարարության գլխավոր արգելափակներից մեկն եւ հանդիսանում) հաղթահարելու անհրաժեշտությունը:

Մեզանում կուլտուրական զարգացումը յետ եմնում տնտեսական զարգացումից եւ բանվորների ու գյուղացիների կենսական մակերեսից: Յեր-

կրի տնտեսական աճումի և մասսաների կուլտուրական վերելքի միջև յեղած անհամապատասխանութիւնը պետք է ամենայն վճռականութեամբ վերացնել: Անհրաժեշտ է ամենուրեք, մեր լայնածավալ Միութեան բոլոր շրջաններում, կյանքի բոլոր բնադավառներում ուժեղացնել կուլտուրական աշխատանքը: Ահա թե ինչու բանվոր դասակարգի և գյուղացիութեան կարևորագույն անելիքների շարքում ներկայումս առաջադրվում է կուլտուրական հեղափոխութեան խնդիրը:

* * *

Մեր ժամանակակից գեղարվեստական գրականութիւնը, վոր ինքնըստինքյան վոչ պակաս կարևոր գաղափարախոսական գործոն է հանդիսանում, միևնույն ժամանակ կուլտուրական հեղափոխութեան գորեղ գործիք է: Այդ գրականութիւնը պետք է ամբողջովին մոբիլիզէ անել՝ մեծ կուլտուրական շինարարութեան գործում ակտիվ մասնակցութեան համար: Նրա աշխատողների առաջ է դրված՝ կուլտուրական հեղափոխութեան մեջ աշխատի մասնակցութիւնն ունենալու նախապատրաստութեան խնդիրը:

XV համագումարի վորոշումների ուսումնասիրութիւնը գրողի համար ունի յերկու տեսակ նշանակութիւն: Մի կողմից, նա կբարձրա-

ցնի գրողի հասարակական-քաղաքական մակերեւոյթը, մյուս կողմից, կզինի նրան այն փաստերով ու գաղափարներով, վոր կարելի չէ և պետք է կուսակցական դիրեկտիվների քաղաքական լեզվից թարգմանել գեղարվեստական պատկերների լեզվի: Դրա համար ել գրողի կողմից, համագումարի աշխատանքի և վորոշումների այդ ուսումնասիրութիւնը պետք է լինի և՛ խորը և՛ լրիվ: Նա պետք է ընդգրկի վոչ միայն ներքին շինարարութեան, այլև միջազգային բնույթի հարցերը:

Համագումարը շատ մեծ ուշադրութեան առարկա դարձրեց համաշխարհային կապիտալիզմի աճող կրիզիսի և ԽՍՀ Միութեան արտաքին դրութեան հարցերը: Այս ընդարձակ, բազմաթիվ, կարևոր պրոբլեմներ ընդգրկող թեման մեր գրողի ամենախոր ուշադրութեանն է արժանի:

ԽՍՀ Միութիւնը բացառիկ լերկիր է հանդիսանում: Սակայն ԽՍՀՄ ապրում է, իր գոյութիւնը պահպանում է՝ շրջապատված կապիտալիստական աշխարհով, վորը տակավին բռնում է յերկրագնդի $\frac{5}{8}$ մասը: Մենք շահագրգռված ենք մեր սկզբունքների, նպատակների և անելիքների առավել ազդեցութիւնը կապիտալիստական շրջապատի վրա տարածելու մեջ: Միևնույն ժամանակ մենք յերբեք չենք հրաժարվում, այլ համարում ենք մեզ համար խիստ ոգտակար է անհրաժեշտ՝

ոգտագործել առաջնակարգ կապիտալիստական
յերկրների գիտության և տեխնիկայի, աշխատան-
քի կազմակերպման ու արտադրության վերա-
բերյալ կարևորագույն նվաճումները:

Սակայն շրջապատի վրա ազդելու համար,
այդ շրջապատից մեզ համար կարևորն ու ոգտա-
կարը յուրացնելու համար անհրաժեշտ է
ճանաչել այդ շրջապատը: Համագումարի վորո-
շումներն ու նյութերը ալսորվա կապիտալիստա-
կան աշխարհի ճանաչման բանալին են մեզ տալիս:

Այն զգաստ և խորունկ մարքսիստական վերլու-
ծությունը, վորով ամեն անգամ մեր կուսակ-
ցությունը մերկացնում է կապիտալիստական աշ-
խարհի եկոնոմիկան և քաղաքականությունը, վոր-
պեսզի վորոշի վորջ կապիտալիստական հասարա-
կության վիճակը ժամանակի յուրաքանչյուր
տվյալ շրջանի համար, — անդրադարձել է նաև
XV համագումարի նյութերի վրա:

Միջազգային դրության ամենաբարդ պրոբլեմ-
ները համագումարի գործերում գտել են իրենց
պարզ և հատու վորոշումները: Մեր կուսակցու-
թյան բարձրագույն մարմինների, նաև Կոմին-
տերնի մարմինների վորոշումները, ճիշտն ասած,
կապիտալիզմի աճող կրիզիսի և միջազգային հե-
ղափոխական շարժման կարևոր հարցերի լավա-
գույն իսկական-գիտական ուսումնասի-

րություններն են հանդիսանում: Իսկ այդ բո-
լորը այժմ միջազգային պատմության կենտրո-
նական հարցեր են:

Ճիշտ է, թե Կոմինտերնի և թե մեր կուսակցա-
կան համագումարների տված անալիզը կապիտա-
լիստական աշխարհի վիճակի վերաբերյալ, անմիջա-
կանորեն քիչ է շոշափում գաղափարախոսական
կարգի յերևույթները, վոր ամենից շատ են գրավում
գրողի ուշադրությունը: Այդ վորոշումներում դուք,
իհարկե, չեք գտնի բուրժուական արվեստի և
գրականության այս կամ այն նմուշների գնա-
հատությունը: Բայց վերջինների ստույգ ըմբռն-
ման համար, ինչպես նաև հասարակական պո-
լիկայի ըմբռնման համար, նախ և առաջ ան-
հրաժեշտ է այդ յերևույթների արմատնե-
րի ճանաչումը, իսկ այդ ձեռք է բերվում
տվյալ հասարակության (վորի մեջ այդ յերևույթ-
ները տեղ ունեն) տնտեսական բազայի ուսում-
նասիրությամբ: Միայն այն ժամանակ, յերբ
մենք ուսումնասիրում ենք բազմակող-
ման իրորեն կապիտալիստական հասարա-
կության հիմքն ու նրա եկոնոմիկան,
մենք ավելի հաստատ ենք ճանաչում
նրա հասարակական պոլիտիկայի և գա-
ղափարախոսական վերնաշենքի բար-
դագույն պրոբլեմները:

Սոցիալիստական յերկրի ազդեցությունը կապիտալիստական յերկրների և ճնշված գաղութների ու կիսագաղութների վրա անցնում է զանազան կանախներով: Այդպիսի կանախներից մեկն է հանդիսանում անապայման և մեր գեղարվեստական գրականությունը: Մի քանի ամիս առաջ, Ալեքսանդր Սերաֆիմովիչի հորեյլանի ժամանակ, շատ արգարացի կերպով նիշում եյին, վոր թեև կարմիր բանակը չե վոտնակոխել խՍՀ Միության սահմաններից դուրս, սակայն Սերաֆիմովիչի յերկերը մոծվել են կապիտալիստական յերկրները և այնտեղ համապատասխան ազդեցություն արել աշխատավոր մասսաների վրա: Միջազգային պրոլետարիատի և զանազան յերկրների աշխատավորների այլ խավերի վրա մեր գործած ազդեցության փաստը գեղարվեստական գրականության միջոցով — դուրս է ամեն կասկածներից: Բայց այդ փաստը մեզ վրա դնում է ծավալվող միջազգային պրոլետարական հեղափոխության սպասարկման նոր ու մեծ պարտականություններ: Ժամանակները փոփոխվում են: Մինչ-հեղափոխական Ռուսաստանում կապիտալիզմի առաջնակարգ յերկրների գրականությունը պակաս ազդեցություն չե ունեցել մեր առաջավոր մտավոր

րականության և հեղափոխական բանվորների վրա: Մարքսիզմը, վոր մեզ մոտ կատարեց իր հսկայական պատմական դերը, տեղափոխված եր կապիտալիստական Յեվրոպայից: Միջազգային սոցիալիզմի և հեղափոխական շարժման գաղափարները անցել են մեզ մոտ՝ ցարական ժանդարմերիայի պատեքը ճեղքելով: Բայց այս բոլորը հեռու անցյալին է մնացել: Այժմ այլ ժամակներ են: Մինչ-իմպերիալիստական շրջանի մարքսիզմը, մեզ մոտ նորից վերամշակված, իր մի քանի մասերում այժմեականության նորագույն պրոբլեմներով լրացված, այժմ արդեն, իբրև կապիտալիզմի եպոխայի նորագույն ֆազայի մարքսիզմ, իբրև իմպերիալիզմի եպոխայի մարքսիզմ, այսինքն՝ իբրև լենինիզմ, տեղափոխվում է վոչ միայն Արևմուտքի յերկրները, այլ և յերկրագնդի բոլոր անկյունները, ուր ճնշվածներ և ստրկացածներ կան, վորպեսզի նրանց ձեռքում ծառայի իբրև միակ և անփոխարինելի դրոշ ու պայքարի գործիք՝ կապիտալիզմի տապալման և վողջ աշխարհում կոմունիստական հասարակության իրականացման համար: Սրանում է արտահայտվում մեր Հոկտեմբերյան հեղափոխության միջազգային բնույթը: Սրանում է արտահայտվում և այն մեծ պատմական միասիւն, վոր դրված է մեր բանվոր դասակարգի վրա:

Մեր գեղարվեստական գրականությունը, վոր աճելով և բարգավաճելով՝ ավելի ու ավելի կթարգմանվի այլ ազգութունների լեզուներով, իր հերթին կուժեղացնի մեր յերկրի սոցիալիստական ներգործությունը աշխարհի աշխատավոր մասսաների վրա: Մեր գրականությունը չի կարող նեղ ազգայնական շրջանակներում փակվել: Նա չի կարող Պ. Դրուժինի հետ ձայնակցել՝

На кой же чорт иные страны,
Кроме советской стороны!

Մեր գրականությունը միջազգային պրոլետարական գրականության ավանգարդն է հանդիսանում. նրա միջազգային անելիքները պետք է գիտակցված լինեն մեզանից յուրաքանչյուրի՝ կողմից և պետք է կենսագործվեն: Դրա համար միջազգային բնույթի թեմաները պիտի լայն արտացոլում ունենան մեր գեղարվեստական գրականության յերկերի մեջ:

Պետք է շատ, ավելի ևս տաղանդավոր, մեծ սոցիալիստական շինարարությունը կազմակերպող մեր բանվոր դասակարգի պայքարին ու աշխատանքին նվիրված յերկեր տալ: Այդ յերկերը, յերբ ոտար լեզուներով թարգմանվեն, իրենց ծառայությունը կմատուցեն միջազգային բանվորական շարժմանը:

Դրա համար, իհարկե, անհրաժեշտ է կյանքի բազմակողմանի ուսումնասիրություն ու հարցերի մշակումն այն յերկրի կամ ժողովրդի, վորի կյանքը ուզում ենք անդրադարձնել մեր յերկերում: Այսպես, որինակ, նախնական Յեգիպտոսի պատկերների զարմանալի հարազատությունը, վոր տվել է Շեքսպիր — պատմական վեպի այդ հռչակավոր վարպետը — արդյունք է հանդիսանում համապատասխան նյութերի վրա ունեցած քրտնաջան ու հոգատար աշխատանքների, վորոնք, յուրացնելով միայն՝ նա կարողացավ իր յերկերում վերակենդանացնել նախնի Յեգիպտոսի կյանքը:

Սա շատ ուսանելի որինակներից մեկն է, թե ինչպես պետք է մեր գրողը մոտենա՝ իր գրվածքներում միջազգային կյանքը արտացոլելու համար: Մենք ունենք և ներհակ որինակներ, թե ինչպես չպետք է ձեռք դարկել ոտար կյանքի նկարագրության: Կարելի՞ յե արդյոք վիճել այն մասին, վոր Պիլ'նյակի հիշողությունները չինական հեղափոխության մասին, ավելի շուտ ուսու ինտելիգենտի խոհեր են՝ իրեն անհայտ առարկայի մասին, քան թե գեղարվեստագետի՝ տեսանելի կյանքի, կենդանի մարդկանց, փաստերի և դեպքերի նկարագրություն: Կասկած չկա, վոր Պիլ'նյակը չի մշակել իր աշխատանքի նյութը: Նա մոտե-

ցել ե իր նյութին վոչ իբրև գեղարվեստագետ, այլ իբրև պատահական անցորդ:

Դա ավելի ևս սխալ մոտեցում է գրողի կողմից, քանի վոր գեղարվեստական գրականությունը այնտեղ, ուր տնտեսագիտությունը տեսնում է թվեր ու փաստեր, պետք է տեսնի կենդանի մարդկանց, նրանց կենդանի զգացմունքները, նրանց կոնկրետ՝ միս ու արյուն դառած կյանքն ու պայքարը, և պետք է ցուցադրե այդ: Գրողը, հետևապես, պետք է գիտենա այն, ինչ վոր գիտե գիտնականը, նաև այն, ինչ վոր գիտնականը կարող է չգիտենալ: Կենդանի մարդուն ցույց տալու խնդիրը, վոր դրված է մեր գրականության առաջ—այդ է նշանակում: Վոչ թե մեր սոցիալիստական շինարարության չոր, ռացիոնալ, իսկական ուսումնասիրություն, վոչ թե տրակտատ՝ շինական հեղափոխության ու իմպերիալիստական ճնշման մասին, այլ սոցիալիզմ կառուցող և Յանցզիի հովտում պայքարող մարդկանց խորունկ մարքսիստական գիտություն և մարդկային պոլիտիկայի, մարդկային խոհերի և զգացումների վողջ բարդության մերկացման հիման վրա դրված կենդանի պատկերներ, և վոչ թե արատրակտ սքեմաներ:

Անհրաժեշտ է աճող համաշխարհային պրոլետարական հեղափոխության կարևորագույն դեպքե-

րին և նրա առանձին դրսևորումներին նվիրված յերկեր ստեղծել: Սյնպիսի հսկայական թափի դեպքեր, ինչպիսիքն են՝ չինական հեղափոխությունը, հսկայական ապստամբությունները՝ ճընշված գաղութային յերկրներում, խոշորագույն բանվորական ապստամբություններն ու գործադուլները, պետք է ուսումնասիրվեն և անդրադարձվեն մեր գեղարվեստական գրականության մեջ իրենց բոլոր գործող ուժերով հանդերձ: Մեր գեղարվեստական գրականությունը, համարելով իրեն իբրև միջազգային պրոլետարական գրական ֆրոնտի առավել ամրացած շրջաններից մեկը, պետք է զբաղվի և միջազգային պրոլետարական շարժման հարցերով՝ դա անդրադարձնելով իր եջերում, դրան նվիրելով իր ստեղծագործության լավագույն նմուշները:

Վոչ միայն մի շարք կապիտալիստական յերկրների աշխատավոր մասսաներին, այլ և մեր յերկրի բանվորներին և գյուղացիներին հաճախ լրիվ հայտնի չեն լինում գիշատիչ նենգությունները տիրող իմպերիալիստական վոհմակների, վորոնք իրենց բռնության տակ են պահում գաղութների և կիսագաղութների ճնշված բազմամիլիոն ազգություններ: Իսկական պրոլետարական գրականությունը կարող է առավել ևս ցայտուն ու լրիվ կերպով մերկացնել, վերլուծել և դրսևորել իմպերիա-

լիզմի իրական եյությունը և նրան հատուկ պարագիտիզմի բոլոր միջոցները:

Գեղարվեստական գրականության համար վոչ պակաս յերևելի թեմաներ կարող ե տալ կապիտալիստական աշխարհի նոր համաշխարհային, մինչև որս չտեսնված ու չլսված սպանդանոցների անդադար պատրաստումը:

* * *

Անհրաժեշտ ե ընդգծել նշանակութունը ևս մի թեմայի, վորը մեր գեղարվեստական գրականության մեջ առայժմ բավականաչափ արտացոլած չե: Մենք ինկատի ունենք խորհրդային յերկրի տասնամյա պայքարը կապիտալիստական աշխարհի դեմ:

Այդ հարցը ուսումնասիրելով, մենք իմանում ենք, թե ինչպես մեր կուսակցության և խորհրդային իշխանության անսխալ քաղաքականությունը, մեր պայքարի զանազան ետապներում, ամենազոժվարին պայմաններում ապահովել ե իՍՆ Միության միջազգային գորությունը և բարձրացրել՝ իբրև միջազգային խաղաղության գործոնի՝ մեր յերկրի դերը, իՍՆ Միության՝ իբրև համաշխարհային հեղափոխական շարժման կենտրոնի՝ հեղինակավորության աճումը:

«Համաշխարհային կապիտալիզմի կրիզիսի աճումը, կապիտալիստական սիստեմայի բոլոր հակա-

սությունների սրմանը զուգընթաց, սրում ե նաև մեզ շրջապատող բուրժուական յերկրների և իՍՆ Միության (վորը իր հաղթական զարգացումով խախտում ե համաշխարհային կապիտալիստական գերիշխանության հիմքերը) միջև յեղած հակասությունները» (Համագումարի բանաձևը կենտկոմի հաշվետվության առթիվ):

Այդ ուղղությամբ առանձին ուշադրության արժանի յեն հետևյալ մոմենտները.

ա) Սոցիալիստական ելեմենտների աճումը իՍՆ Միության մեջ:

բ) Բուրժուազիայի հույսերի խորտակումը՝ պրոլետարական դիկտատուրայի վերասերման վերաբերյալ:

գ) իՍՆ Միության միջազգային ազդեցության գորեղացումը:

Անհեթեթություն կլիներ յենթադրել այդ հակասությունների հաշտեցումը թե կապիտալիստական յերկրների միջև և թե վողջ կապիտալիստական աշխարհի և իՍՆ Միության միջև: Մեր անեքիճն ե—պատրաստել աշխատավոր մասսաների բոլոր խավերը՝ այդ յերկու սիստեմների (կապիտալիստական և խորհրդային) ընդհարման անհրաժեշտության մտքին:

Դրա հետ միաժամանակ անհրաժեշտ ե ամեն կերպ մերկացնել պացիֆիստական իլյուզիաները՝



պատերազմների լիկվիդացիայի հնարավորութեան մասին կապիտալիստական սիստեմի շրջանակներում: Ամեն տեսակ կոնֆերենցիաների և Ազգերի Լիգայի հանձնաժողովների միավորման փորձերի, բուրժուազիայի առանձին խմբակների «խաղաղութեան դեկլարացիաների» մերկացման թեման պետք է գեղարվեստական գրականութեան կարևորագույն խնդիրներից մեկը համարել:

Պետք է կատարյալ պարզութեամբ դրսևորել բոլոր նենգութունները բուրժուական հասարակութեան, վորը ժողովրդական մասսաների մեջ խաբելու դիտավորութեամբ ցանուծ է իլլյուզիաներ՝ թագցնելու կատաղի մրցակցութունը իմպերիալիստների միջև: Պացիֆիստական իլլյուզիաների դեմ պայքարելը ավելի ևս կարևոր է մեզ համար, քանի վոր նրանք մեզ մոտ ել վորոշ հոգ են գտնում՝ հանձինս թե քաղաքի և թե գյուղի նոր բուրժուազիայի ներկայացուցիչների: Հայտնի է, վոր մեր նոր բուրժուազիան քողարկում է իր գաղափարախոսութեանը աղանդավորութեամբ, տոլստոյականութեամբ և այլն: Լեւ Նիկոլայևիչ Տոլստոյի յերկերի հրատարակութեան շուրջը յեղած վեճերը, հին բոյլշևիկների վորոշ անհանգստութեանը մեծ գեղարվեստագետի գրքովածքների լայն ազդարարութեան շուրջը՝ հենց այդ վտանգի ազդանշանն են տալիս:

Մենք արդեն ստացինք, վոր մեզ անհրաժեշտ է յուրացնել կապիտալիստական յերկրների բոլոր այն նվաճումները, վոր կարելի է ոգտագործել սոցիալիստական շինարարութեան գործում: Լեւինը ասում էր, վոր սկզբում մեզ միանգամայն բավական է բուրժուական լավ կուլտուրան: Այդ «բուրժուական լավ կուլտուրան» մարմնացած է մարդկանց և նյութերի մեջ: Այդ ոգտագործելու համար մենք պիտի ծանոթանանք այն ամենին, ինչի մեջ վոր մարմնացած է բուրժուական կուլտուրան:

Սակայն, կապիտալիստական հասարակութեան մեզ հետաքրքրող ամեն մի յերևույթ պետք է մարքսիզմի պրիզմայով անցկացնել: Հարկավոր է, ինչպես Լենինն եր ասում, քննադատորեն վերամշակել բուրժուական կուլտուրան:

Մեր բանվորին, որինակ, շատ հետաքրքիր է գիտենալ, թե աշխատանքի կազմակերպման և արտադրութեան գործը ինչպես է դրված լավագույն կապիտալիստական ձեռնարկութեաններում: Պետք է մարքսիստ-գրող, վոր կարողանա որինակելի կապիտալիստական ձեռնարկութեանների կյանքի պատկերը տալ: Մեր գեղարվեստական գրականութեան մեջ առայժմ չկան այդ տեսակի գրվածքներ: Մեզ հարկավոր է լավ նկարագրութուն այն բանի, թե ինչպես է Արևմուտքում

գիտությունը գործադրվում արտադրության մեջ, ձեռնարկությունների ներքին կարգի նկարագրություն, աշխատանքի և տնտեսարարության առողջ տրագիցիաների նկարագրություն:

Այդ բոլորից մեր ընթերցողը իր գործնական աշխատանքի համար շատ ուսանելի և ոգտակար տեղեկություններ կըաղի: Դրա հետ միասին մեզ համար կարևոր է ցույց տալ մեր ընթերցողին արևմտյան Յեվրոպայի և ամերիկյան բանվորի կենցաղի բոլոր առողջ և կուլտուրական կողմերը:

Մենք ավելորդ ենք համարում հետագա պարզաբանումը թվարկած թեմաների, վորոնք անպայման կարող են գանազան գեղարվեստական յերկերի նյութ դառնալ: Մենք միայն ընդգծում ենք այդ հարցերի ուսումնասիրության անհրաժեշտությունը գրողի համար, վորը, դրանց հետ ծանոթանալուց հետո, ինքը այդ կարգի մի շարք յերևույթների լուսաբանության ծրագիրը կմշակի:

Յերբ գրողը կզբաղվի կապիտալիզմի աճող կրիզիսի պրոբլեմների ուսումնասիրությամբ, յերբ նա ավելի խորը կծանոթանա միջազգային պրոլետարիատի և գաղութների ու կիսագաղութների բազմամիլիոն աշխատավոր մասսաների ծառացող հեղափոխական շարժման, — նրա գեղարվեստական հոտառությունը նրան կթելադրե՝ իր յերկերում այդ անդրադարձներու ձևը:

Մեր գեղարվեստական գրականությունը, միջազգային իր անելիքների կատարումով, անպայմանորեն ավելի կբարձրացնի աշխատավորական մասսաների միջազգային համերաշխության զգացմունքը: Կրթելով աշխատավորներին ինտերնացիոնալիզմի վոգով, մենք յուրաքանչյուրին կտանք այն հիմնականը, առանց վորի անհնար է նրա իսկական սոցիալիստական վերամշակումը: Հենց դրանով գեղարվեստական գրականությունը կհանդիսանա կուսակցության լավագույն աջակիցներից մեկը՝ մեր հեղափոխական անելիքների իրականացման գործում:

* * *

Չնայելով միջազգային պրոբլեմների մեծ կարևորությանը, գործնականապես գեղարվեստական գրականության մեջ ավելի շատ ուշադրություն ու տեղ պետք է տրվի, իհարկե, մեր ներքին շինարարության հարցերին: Այս նյութը այնքան մեծ է, վոր ամեն մի գրողի նա մեծ հնարավորություններ է տալիս իր ձիրքի ամբողջ թափը դրսևորելու:

Կուսակցության համագումարը նախ և առաջ ընդունեց, վոր մեր յերկերը ինդուստրիալ յերկիր է դառնում: Այս դրությունը հաս-

տառված ե բազմաթիվ փաստերով և տվյալներով, վորոնցով լի յեն և համագումարի նյութերը: Մի-աժամանակ համագումարը ամբողջ անցած շրջա-նի մեր բոլոր նվաճումների գնահատությունն ե տալիս: Այսպիսով համագումարի նյութերում մենք ունենք լիակատար, վառ կերպով նկարված՝ մեր տնտեսական աճման և զարգացման պատկերը պրոլետարիատի դիկտատու-րայի առաջին տասնամյակում:

Այդ ժամանակամիջոցի ընթացքում կուսակցու-թյան կենտրոնական կոմիտեյի ճիշտ լենինյան քաղաքականությունը ապահովել եր պետական արդյունաբերության նախապատերազմյան չափից անցնելը, զբաղված բանվորների թվի ավելացու-մը, աշխատանքի արտադրողականության և աշ-խատավարձի աճումը: Դա մեր եկոնոմիկայի զար-գացման մի գիծն ե, վորը ուղեկցվում ե հսկայա-կան փոփոխություններով՝ մեր կյանքի բոլոր բնա-գավառներում: Մեր տնտեսության զարգացման յերկրորդ գիծը — ծավալումն ե պետական խոշոր արդյունաբերության, վորը ուղեկցվում ե արտա-դրության միջոցների արտադրության մասի ան-անընդհատ աճումով: Այս հանգամանքը կրում ե իր մեջ յերկրի ինդուստրիալ զարգացման բնո-րոշ առանձնահատկությունը: Ընդհանուր արտա-դրության մեջ արտադրության միջոցների արտա-

դրության մասի ուժեղացումը յերկրի ինդուստրի-ալիզացիայի հիմնական ցուցանիշներից մեկն ե հան-դիսանում: Յեւ զարգացման այս գիծը ուղեկցվում ե մեր հասարակական կյանքի վերին հարկերում՝ մի շարք փոփոխություններով: Ցուցանիշների մի այլ շարքը — սոցիալիստական ինդուստրիայի հիմնական կապիտալի նորոգման, ժողովրդական տնտեսության խոշոր տեխնիկական արտադրողա-կան վերանորոգումների, նոր արդյունաբերական շինարարության, խոշոր կառուցվածքների և վերա-կանգնումների, հին ձեռնարկությունների վե-րասարքավորման մեջ ե: Այս բոլոր հանգամանք-ները հիմնական ցուցանիշներն են մեր յերկրի ինդուստրիալիզացիայի ճանապարհին արած մի-անգամայն ելային նվաճումների: Այս բոլոր հա-ցերը զրոյի համար հանդիսանում են բավականա-չափ և արժեքավոր պրոցեսներ, վորոնց ուսում-նասիրությունը զեղարվեստագետին հնարավորու-թյուն ե տալիս ճիշտ մոտեցում ունենալու դեպի կյանքը, դրա ըմբռնումն ու անդրադարձումն իր գրվածքներում: Սա նրա մեջ առաջ կբերի ավե-լի ևս մեծ ուշադրություն դեպի կյանքը, վեր-ջինիս ամբողջ բազմադունությամբ, բազմակող-մանիությամբ և բարդությամբ:

Յերկրի ինդուստրիալիզացիան, սոցիալիստական քաղաքի առաջնորդող դերի ուժեղացման հիման

վրա, աջակցեց գյուղատնտեսութեան հետագա զարգացման: Քաղաքի և գյուղի միջև տնտեսական կապը շոշափելիորեն ամրացավ, գյուղատնտեսութեան աճման հետ միաժամանակ աճեց և գյուղատնտեսական կոոպերացիայի բոլոր տեսակների նշանակութիւնը: Մեր եկոնոմիկայի ընդհանուր վերելքն ուղեկցում էր թե նյութական և թե հոգեբանական կարգի՝ բաժան-բաժան յեղած գյուղացիական տնտեսութեան սոցիալիստական վերաշինութեան ռեալ հնարավորութիւնների աճումով:

Մեր տնտեսութիւնը զարգանում է ներքին և արտաքին կարգի հակասութիւններում: Դրանք իրենց արտացոլումն ունեն ինչպես յերկրի բուն եկոնոմիկայում, այնպես եւ նրա կյանքի մյուս բնագավառներում: Համազումարը նիշեց մեր պակասներն ու դժգոհութիւնները առաջացնող այդ հակասութիւնները:

Կասկած չկա, վոր տնտեսական զարգացման անցած շրջանը անկասկած մի քայլ էր դեպի սոցիալիզմ: Բայց դա դեռ չի նշանակում, վոր վերացված են այն բոլոր դժվարութիւնները, վտանգներն ու հակասութիւնները, վոր կապված են մեր զարգացման առանձնահատկութիւնների, յերկրի տեխնիկա-տնտեսական յետամնա-

ցութեան և պրոլետարիատի թշնամի սոցիալական-դասակարգային ուժերի գրոհի հետ:

Գրողի համար արտակարգ նշանակութիւն ունի, իհարկե, մեր եկոնոմիկայում տեղի ունեցող բոլոր հակասութիւնների և դժվարութիւնների ուսումնասիրութիւնը: Հենց այդ հակասութիւնների և դժվարութիւնների հիման վրա առաջ են գալիս մի շարք բացասական յերեւելումներ:

Այդ հակասութիւններից և դժվարութիւններից կարևորագոյնները սրանք են. — արտահանութեան և ներմուծման պրոբլեմը, վոր ծայրահեղորեն բարդացած է միջազգային դրութեան սրվածութեամբ: Այս պրոբլեմի հետ են կապված կուլակների և նեպմանների՝ մեր արտաքին առևտրի մոնոպոլիան խորտակելու ձգտումները, — մոնոպոլիան, վոր պրոլետարիատի դիկտատուրայի տիրած հրամանատարական բարձունքներից մեկն է հանդիսանում:

Բավական մեծ նշանակութիւն ունեն ինքնաբերական և արդյունաբերական գների իջեցման պրոբլեմը: Ինչպես հայտնի յե, նրա հետ կապված է բանվոր դասակարգի մեջ ցեխային և յետամնաց տրամադրութիւնների հաղթահարման անհրաժեշտութիւնը՝ աշխատանքի արտադրողականութիւնը բարձրացնելու և արդյունաբերութեան

պրոդուկցիայի հատկութիւնը բարելավելու համար: Ինքնարժեքի իջեցումը հնարավոր ե միայն մեր արտադրութեան ռացիոնալիզացիայի հիման վրա: Սակայն ռացիոնալիզացիայի ձեռնարկումները շատ հաճախ նաև հանդիպում են բանվոր դասակարգի ցեխ-ային և խմբակային շահերին, վոր առաջացնում են մի շարք բացասական յերևույթներ և դժվարութիւններ: Այդ ուղղութեամբ են առաջ գալիս նաև գյուղացիութեան մեջ նկատվող դժգոհութիւնները: Ինքնարժեքի պրոբլեմի անսխալ վորոշումն հանդիսանում է միակ միջոց՝ գյուղատնտեսական և արդյունաբերական ապրանքների գների միջև յեղած «մկրատ»-ը վերացնելու համար: Արդյունաբերական ապրանքների գների իջեցումը կենտրոնական քաղաքական հարց ե հանդիսանում — բանվոր դասակարգի և գյուղացիութեան դաշնի հարց: Վոչ պակաս կարևոր ե — ապրանքային սովի պրոբլեմը, մի կողմից, և քաղաքը գյուղատնտեսութեան մթերքներով հայթայթելու բարելավման պրոբլեմը — մյուս կողմից: Թե վո՞րքան շատ դժվարութիւններ կան մեր առաջ այդ ուղղութեամբ — դա պարզ կերպով մեզ ցույց ե տալիս ներկայիս կոնյունկտուրան:

Համագումարը նիշեց, վոր բոլոր այդ պրոբլեմները հաջող վորոշելու համար անհրաժեշտ ե

կուսակցութեան բոլոր ուժերի հատուկ լարումն, նրա կամքի միասնականութիւնը և կուսակցական դիրեկտիւների համերաշխ կատարումն: Սակայն կուսակցութիւնը գորեղ ե և միասնական՝ բանվոր դասակարգի և աշխատավոր մասսաների լայն խավերի միասնականութեամբ և զիտակցականութեամբ: Ամեն մի գեղարվեստական գործ, ընդգրկելով այդ պրոբլեմները, դրանք անսխալ առաջադրելով մասսաներին, կսպասավորե մասսաների միավորման և կրթութեան, և կդուրացնե կուսակցութեան աշխատանքը մեր եկոնոմիկայի հակասութիւնների հաղթահարման ու այդ դժվարութիւնների վերացման գործում:

Զնայած բոլոր դժվարութիւններին և հակասութիւններին, մեր յերկիրը կարող ե շարժվել սոցիալիզմի ռդիյով, ավելի վճռականորեն վտարելով մեր եկոնոմիկայից մասնավոր կապիտալիստական տնտեսութեան տարրերը:

Համագումարի դիրեկտիւները հենց այդ ուղղութեամբ են: Համագումարը իր վորոշումներում նիշեց, վոր կապիտալիստական տարրերի դեմ գրոհ տալու նախադրյալները ստեղծված են մեր տնտեսական զարգացման նախընթաց հաջորդութիւններով, վորոնք հիմնված են աճող ապրանքափոխանակութեան և ռազմա-կոմունիստական մնացորդների վերացման վրա և վորոնք

կենտրոնացրել են պրոլետարական պետութեան ձեռքում պատշաճ նյութական-տնտեսական հնարավորութիւններ՝ ինչպես գյուղում կապիտալիստական տարրերը հաղթահարելու, այնպես ել քաղաքում մասնավոր կապիտալը հետագայում վտարելու համար:

Վոչ պակաս կարևոր պրոցես է հանդիսանում իՍՅ Միութեան մեջ դասակարգային հակասութիւնների մասնակի աճումը: Այդ պրոցեսը կոնկրետորեն դրսևորվում է մի շարք յերևույթներում՝ ի թիվս վորոնց և մեր խորհրդային պետական ասպարատի բյուրոկրատական աղավաղումների փաստերում: Քաղաքի և գյուղի մասնավոր կապիտալիստական խավերը, կապակցվելով խորհրդային և տնտեսական ասպարատի վորոշ տարրերի հետ, ձգտում են ուժեղացնել իրենց հակագործնեյութիւնը բանվոր դասակարգի առաջխաղացութեան դեմ: Այստեղից և բղխում է բյուրոկրատիզմի դեմ պայքարելու կարևորութիւնը: Այդ պայքարում վոչ պակաս դեր ունի կատարելու և մեր գեղարվեստական գրականութիւնը, Գեղարվեստական գրականութեան եղբից անողոք քննադատութիւնն իր ամբողջ թափով պիտի ուղղված լինի մեր յերկրի բյուրոկրատական խոցերի ալյանդակ յերևույթների դեմ: Թվում է թէ գրողը նյութերի պակաս չի գգա:

* * *

Իհնչ կոնկրետ խնդիրներ են ծագում տնտեսական պրոբլեմներից, իՍՅ Միութեան ներքին շինարարութեան հարցերից մեր գեղարվեստական գրականութեան համար:

Մեզ թվում է, վոր առաջին նվազ մեզ հարկավոր է նիշել մեր գրականութեան մեջ, արտացոլել նրա եղերում սոցիալիզմի տարրերի աճման պրոցեսները և յերկրի ինդուստրիալիզացիայի իրագործման կոնկրետ արդյունքները:

Մեր տնտեսութեան մեջ կատարվող փոփոխութիւնները փոփոխութիւններ են առաջ բերում և մեր յերկրի սոցիալական-հասարակական կյանքում: Զարգանում է և աճում նոր մարդը — ինդուստրիալիզացիան իրագործողը, սոցիալիզմի շինարարը: Նա իր ամբողջ գործնեյութեամբ, իր վողջ ներքին և արտաքին աշխարհով պիտի գեղարվեստագետի վրձինի նյութ հանդիսանա:

Մեր յերկրի սոցիալիստական ինդուստրիալիզացիայի գործում ամեն մի նվաճում նշանակում է՝ կապիտալիստական տարրերի վտարումն ի հաշիվ սոցիալիստական տարրերի ուժեղացման:

Հաղթահարող սոցիալիզմը առաջացնում է կապիտալիզմի մնացորդների՝ հանձինս նրանց

կրողներին՝ դաժանագույն ընդդիմադրությունը։ Մեր եկոնոմիկայում սոցիալիստական տարրերի ընդլայնումը մեծ և բարդ սոցիալական պայ-
քարի ցուցանիշն է։

Ուսումնականությունը արդեն շատ վառ եղեր է նվիրել մեր յերկրի դասակարգերի բացարձակ պայքարին, հերոսական քաղաքացիական պատե-
րազմին։ Պակաս հետաքրքրական չէ գեղարվես-
տագետի համար այժմյան պայքարի ելույթունը իր բարդությամբ, — պայքարի, վոր կատարվում է ավելի քողարկված, բայց վոչ պակաս դա-
ժան ձևով։ Այստեղ շատ բան կա մերկացնելու և զրստրելու։

Այդ պայքարի զարմանալի պատկերներ են տրված, հրապարակախոսական ձևով, ընկ. Յու. Լարինի «Մասնավոր կապիտալը ԽՍՀ Միության մեջ» գրքույկում։ Այստեղ հավաքված է մեր տնտեսության մասնավոր կապիտալիստական սեկտորի ներկայացուցիչների ամեն տեսակ խար-
դավանքների փաստերի միայն մի չնչին մասը։ Մեր կյանքը լի յե այդպիսի փաստերով։ Խորհր-
դային գրողը պիտի գիտենա այդ փաստերը։

Համագումարի վորոշումներում մենք ցուցում ենք գտնում և այն բանի, վոր Լենինի հարու-
ցած «ո՛վ — ո՛ւմ» հարցը առևտրի բնագավա-
ռից անցել է արտադրության բնագա-

վառը։ Պետք է ուսումնասիրել այն կոմու-
նիստի ուղին, վոր սկսել է «առևտուր անել սո-
վորելուց» և վերջացրել է այդ ուսումը փայլուն հաղթանակով՝ մասնավորի վերաբերմամբ։ Բոլոր նրա նվաճումներն ու հաջողությունները, ինչ-
պես և նրա անճարությունն ու սխալները, պետք է իրենց արտահայտությունն ունենան մեր գե-
ղարվեստական գրականության մեջ։

Բայց «ո՛վ — ո՛ւմ» հարցը առևտրի բնագավառից անցել է արտադրության բնագավառը։ Դա նշա-
նակում է, վոր պետք է հաշվի առնել առևտրի բնագավառում մասնավորի դեմ մղած պայքարից հավաքած մեր փորձը։ Այդ փորձը ուսումնասի-
րելով, մենք ավելի ուժեղ կլինենք այժմ, յերբ պայքարը անցել է արտադրության բնագավառը, ուր դժվարությունները քիչ չեն առևտրի բնա-
գավառում յեղած դժվարություններից։

Մենք արդեն ասացինք, վոր տնտեսական շի-
նարարության հնգամյա պլանին վերաբերյալ համագումարի դիրեկտիվների կատարումը ար-
մատապես պիտի կերպարանափոխի ԽՍՀ Միու-
թյան վորջ եկոնոմիկան։ Կասկածից դուրս է, վոր դա մի հսկայական պրոցես կլինի, վորը մեր կյանքի բոլոր կողմերը պիտի շոշափի։ Շատ հրա-
պուրիչ է թվում այդ պատկերը՝ գեղարվեստա-
կան ցայտուն լեզվով։ Այն ֆանտաստիկ վեպը,

վորը կնկարագրի մեր յերկրի այդ մոտակա ապագան, — իր մեջ կունենա բոլոր այն փոփոխությունները, վոր կկատարվեն ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանի իրականացման հետևանքով: Համապատասխան նյութերը ուսումնասիրելուց հետո, գրողի համար դյուրին կլինի նախատեսել մեր այդ ապագան և տալ նրա ուրվագծերը:

Մեր պլանը կծնվի մեր ճանաչարհի վրա կանգնած բազմաթիվ դժվարությունները հաղթահարելու տանջանքներում: Թե վորքան մեծ է այդ դժվարությունների ազդեցությունը մարդու վրա, այդ մեզ ցույց տվեց կուսակցական դիսկուսիան: Նույնիսկ փորձված, կռիվներում կռիված կուսակցության մեջ գտնվեցին մարդիկ, վորոնք տատանվեցին դժվարությունների առաջ: Իսկ այդ նշանակում է, վոր մասսաներում դեռ շատ կան տատանվողներ, յերկշտներ ու անկայուններ, վորոնց տրամադրությունները և դրսեվորեց կուսակցության ոպպոզիցիան: Այն գեղարվեստական գործը, վորը կտա մոտակա ապագայի պատկերը, — կաշակցի աշխատավոր մասսաների ակտիվության բարձրացմանը, նրանց ենտուզիազմի ու ժեղացմանը, կվոգեւորի մարդկային նորանոր շերտերը՝ աշխատանքի, շինարարության ու պայքարի համար:

* * *

Իրոք հսկայական է հանդիսանում մեր առաջ դրված խնդիրը — բազմամիլիոն մանր գյուղացիական տնտեսությունների խոշոր սոցիալիստական կոլեկտիվների վերաշինությունը:

Այդ խնդրին պետք է նվիրված լինի բազմամիլիոն գյուղացիության յերկրի գեղարվեստական գրականության եջերի մեծամասնությունը:

Գյուղի վերաբերմամբ մեզ առաջադրված են մի շարք խոշոր և բարդ պրոբլեմներ, վոր պահանջում են գրողի հսկայական ուշադրությունը: Այդ պրոբլեմները բավական վերամշակել է ոռւս հրապարակախոսական գրականությունը: Այդ շրջանում աշխատում են ոռւս հրապարակախոս-գրողների և գյուղի հարցերի մասնագետների մեծ կադրեր: Սակայն գեղարվեստական գրականությունը առայժմ շատ չնչին մասնակցություն ունի դրա մեջ: Մեզ համար անագին նշանակություն ունի պրոլետարական դիկտատուրայի պայմաններում զարգացող գյուղացիական տնտեսության առանձնահատկությունների և այդ զարգացմանն ուղեկցող բոլոր պրոցեսների լուսաբանությունը գեղարվեստական գրականության մեջ: Գյուղում ծավալ է տալիս սոցիալիստական և կապիտալիստական ելեմենտների պայքարը:

Այդ պայքարը առավել բացարձակ և պարզ ձև ունի, սակայն մինչև որս դեռ գեղարվեստորեն պատկերավորված չէ։ Վերջապես, առավել կարևոր, հետաքրքրական և գեղարվեստական գրականության համար տնտեսատեր-գյուղացու հին ինդիվիդուալիստական հոգեբանության դարավոր հիմքերի խորտակումը, նրա այժմյան ձգտումը՝ պրոլետարիատի դիկտատուրայի որդանների ոգնությամբ ազատագրվելու մանր բաժան-բաժան յեղած տնտեսության լծից և կազմակերպելու խոշոր կոլլեկտիվ տնտեսություն։

Այս կարևորագույն պրոբլեմը դեռ ամենևին չոչափված չե մեր գեղարվեստական գրականության մեջ, նա սպասում է և պետք է անմիջապես գտնի իր մեկնաբանին գեղարվեստական գրականության եջերում։

* * *

Տնտեսական շինարարության բոլոր պրոբլեմները ներկայումս գրեթե լիովին և ամբողջությամբ կախումն ունին կուլտուրական հեղափոխության հարցից։ Կուլտուրական հեղափոխությունը կարևորագույն պայման է դառնում սոցիալիզմի հաղթական առաջխաղացության։ Սակայն հենց իրեն կուլտուրական հեղափոխության մեջ կարևորագույն նշանակություն է ստանում

մարդու սոցիալիստական վերամշակումը։ Յեվ այդ գործի մեջ ել գեղարվեստական գրականությունը կարևոր գործիք է։ Մարդու վերամշակման խնդիրը գեղարվեստական գրականության մեջ կարող է մի քանի կերպ դրվել։ Ամենից առաջ պետք է մաքրել ուղին այդ աշխատանքի համար։ Պետք է ամենաանողոք կոխի հայտարարել մեր կենցաղում—մարդու՝ դեպի մարդը, մանավանդ դեպի կինը, ունեցած կենդանական, բարբարոս վերաբերմունքին։ Գեղարվեստագետի սուր խոսքով վոչնչացնել է պետք մարդու տարտամությունը, ստահականությունն ու սանձարձակությունը, կրթելով նրա մեջ զգաստություն, դիսցիպլին և մեծագույն աշխատասիրություն։ Աղայական անարխիզմը, աղայական արհամարհանքը դեպի աշխատանքը, դիսցիպլինան, կարգը, խնայողականությունն ու խնայասիրությունը ամենավճռական կերպով պետք է վերացվեն մեր միջավայրից։ Այն ամենը, ինչ առաջ համարվում էր փոքր ինչ բացասական, ուղղակի անտանելի յե դառնում սոցիալիստական շինարարության ֆոնի վրա։ Մեզ այժմ հարկավոր են բոլորովին այլ բնավորություններ—աշխույժ և կամքի տեր, ուժեղ և վոգով արի մարդիկ։

Սոցիալիստական տարրերի կողմից կապիտալիստական տարրերի վտարումը նշանակում է՝

հնի, դարավորի փոխարինումն նորով ու գալիքով։ Սակայն մենք ներկայումս հանդիպում ենք այն ստրկական անցյալին, վորի տարրերը այնքան վառ թվարկել ե ն. Ի. Բուխարինը իր «Չար նկատողություններում»։ Ինչո՞ւն ե ներկայումս այդ ստրկական անցյալը։

Դա — խավարամտության մեջ ե։

Դա — յերեխաշարդության մեջ ե։

Դա — հարբեցողության մեջ ե, «գինու ծովի», արաղի և արցունքների մեջ ե, ինչպես գեղեցիկ (վո՛յ ըստ Յեսենինի) ասում եր Մոսկվայի կոնֆերենցիայում ծերուկ գյուղացին։

Դա — հայհոյանքի մեջ ե։

Դա — թմրության, աշխատանքը չհարգելու և խուլիգանության մեջ ե։

Դա — «խնկի ու սրբապատկերների», «մոմերի» և «ղամպարների» մեջ ե։

Դա — շովինիզմի մնացորդների մեջ ե («на кой же чорт иные страны»)։

Դա — դեպի կինն ունեցած խոզային վարմունքի մեջ ե։

Դա — ներքին անկարգության, իրեն վրա աշխատել չգիտենալու, որլումով չլինայի, ինտելիգենտական մեծամտության, աշխատանքի ստրկական տեմպի մնացորդների մեջ ե։

Սոցիալիստաբար վերամշակելով հին մարդուն, նրա աշխարհայեցողությունն ու պիլիկան ձեւակերպելիս, մենք պետք ե վճռականորեն հարվածենք պրոլետարիատին թշնամի ամբողջ իդեոլոգիան։ Մենք գիտենք, վոր ռուսական նոր բուրժուազիան փորձում ե իր ազդեցությունը աշխատավորների վրա տարածել՝ մի շարք մեծ ու փոքր կանալների միջոցով, ինչպես, որինակ՝ կրոնի բոլոր տեսակներով ու ձևերով, վելիկոռուսական նացիոնալիզմ, հին սովորություններ և բարքեր, մասսաների յետամնացությունն ու տգիտություն և այլն և այլն։

Գեղարվեստագետը վոչ մի դեպքում կաշկանդված չպիտի լինի իր ամեն մի հերոսի, իր յերկերի ամեն մի տիպի նկարագրության կենսական ճշտության խնդրում։

Անցողական շրջանի կյանքը չափազանց հարուստ ե ամեն տեսակի հակասություններով և կոնֆլիկտներով, նրա մեջ տեղ կա և՛ դրամաների, և՛ կատակերգությունների, և՛ վողբերգությունների համար։ Այդ կյանքը պետք ե բազմակողմանիորեն ընդգրկել և մարքսիստական պրիզմայի միջոցով մեր նոր աշխատավոր մասսայական ընթերցողին ցույց տալ կենդանի մարդուն։ Սակայն դրա համար հարկավոր ե մարքսիստական ուսում։ Պետք ե նիշել, վոր «տարե-

րային մարքսիստները», «տարերային գիւղեկ-
տիկները», վորոնց շարքին եր դասում էին
Լ. Ն. Տոլստոյին, ամեն ոք չեն ծնվում: Միջակ
և բարձրագույն տաղանդի տեր գրողը, միջակ
գրողը պետք է տիրապետի մարքսիզմի մեթոդին,
վորպեսզի ոգտակար լինի իր ժամանակին, ծա-
ռայի եպոխայի մեծ գաղափարներին և կրողը
լինի այն ամենի, ինչ անպաշտօն է և առողջ:



ՀՀ Ազգային գրադարան



NL0186451



И. ЛАЗЬЯН

**Решение XV партс'езда
и современная худо-
жественная литература**

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР
Москва, центр, Никольская, 10.